

Միլոս

Մոռացության է մատնվել անասնապահության համար այնպիսի կարևորագույն խնդիր, ինչպիսին սիլոսի պատրաստումն է: Միլոսացումը զանազան կերերը հյութալի վիճակում և հնարավորին չափ քիչ կորուստներով պահպանելու ամենից ավելի մատչելի եղանակն է: Ճիշտ պատրաստված սիլոսում համարյա ամբողջովին պահպանվում են կերի սննդանյութերը և վիտամինները: Այդ պատճառով լավ սիլոսը իր սննդարարությամբ մոտենում է բնական կանաչ կերին, փոխարինում է նրան ձմռանը և գարնանը՝ մինչև արոտավայրում կանաչի երևալը:

Միլոս պատրաստում են եգիպտացորենի ու արևածաղկի կանաչ զանգվածից, վիկ-վարսակի, ոլոռ-վարսակի խառնուրդներից, բնական խոտհարքներից ստացված զանգվածներից, սուդանի խոտից, արմատապտուղների փրերից, կարելի է օգտագործել նաև բազմամյա ցանովի խոտաբույսեր՝ առանձին և խոտախառնուրդների ձևով, գետնախնձորը և այլն: Միլոսի սննդարար արժեքը բարձր է. 1 կգ սիլոսը պարունակում է 0.18-0.21 կերամիավոր, մինչև 12 գ. մարսելի պրոտեին, 20-30մգ կարոտին և այլ սննդարար նյութեր: Այն նաև հարուստ է ածխաջրերով, որոնք նպաստում են կենդանիների կաթնատվության բարձրացմանը: Միլոսն ունի նաև դիետիկ նշանակություն. այն լավացնում է կենդանիների ախորժակը և նպաստում է կերի սննդանյութերի ավելի լավ յուրացմանը: Այդ հատկությունների շնորհիվ այն հանդիսանում է բոլոր գյուղատնտեսական կենդանիների կերաբաժնի կարևոր բաղադրիչ մաս:

Լավորակ սիլոս պատրաստելու համար անհրաժեշտ է ճիշտ ժամանակին կազմակերպել մշակաբույսերի հնձման ժամկետները և սիլոսացման՝ զանգվածի հնձման, բարձման, փոխադրման և խրամատավորման բոլոր աշխատանքները կատարել արագ և որակով: Այսպես՝ եգիպտացորենը սիլոսի համար պետք է հնձել հատիկի կաթնամոմային և մոմային հասունացման փուլում, բազմամյա խոտերը՝ կոկոնակալման-ծաղկման սկզբում, արևածաղիկը՝ ծաղկման սկզբում և այլն: Միլոսի համար կերաբույսերի հնձումը կատարվում է սիլոսահավաք կոմբայններով: Օրինակ՝ KCC-2.6 (նկարում) կամ սիլոսահավաք այլ ինքնագնաց ու կցովի մեխանիզմներով:

Հնձման ժամանակ բույսերը մանրացվում են 4-5սմ չափով և փոխադրվում ու լցվում են խրամատներ: Միլոսացու մասսա պետք է հնձել այնքան, որ հնարավոր լինի մեկ օրվա ընթացքում դաշտից փոխադրել և խրամատավորել: Խրամատները կարող են լինել հողի մեջ խորացված, կիսախորացված և վերգետնյա: Խրամատը լցնելուց առաջ հատակին փռում են 30 սմ մանրացված ծղոտի շերտ, այնուհետև կատարում լցված զանգվածի լավ տոփանում-խտացում թրթուրավոր տրակտորով: Խրամատը լցնելուց անմիջապես հետո զանգվածն արագ և հերմետիկ ծածկում են պոլիէթիլենային թաղանթով՝ 3 սմ ծղոտե և 6 սմ հողի շերտով: Լավորակ սիլոսի գույնը պետք է լինի դեղնականաչավուն: Դեղնավուն սիլոսը



մատների արանքում տրտրելիս արձակում է թեթև դուրեկան հոտ, որը հիշեցնում է նոր թխված հացի կամ թթու դրած վարունգի հոտ:

Անասնապահական մթերքների և հատկապես կաթի արտադրության ավելացման համար սիլոսը հիանալի հյութալի կեր է և լավորակ սիլոս ունենալը պետք է հետաքրքրի անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին:

Անհրաժեշտ է, որ ուշադրություն դարձվի սիլոսացու կերատեսակների մշակությանը, իսկ մշակության աշխատանքները պետք է սկսել աշնանից. կատարել մշակաբույսի մշակման տեղի ընտրություն, հողի պարարտացում, աշնան վար (ցրտահերկ), իսկ գարնանը ձեռնարկել կերաբույսերի ցանքն ու մշակությունը: